



ԳԳ Արարատի մարզ գ. Լանջազատ /Զովաշեն/
Հեռ. (Тел.) 091-58-28-87

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՁԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՍՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2015 թվականի հուլիսի 1 – ին Լանջազատի գյուղական համայնքում տեղի ունեցավ համրային լսում: Նախագահում էր համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանը, քարտուղարում էր գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Մելքոնյանը: Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Հ. Դանիելյանը, ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի աշխատակիցները, համայնքի ընտանեկան բուժբույրը, հանրակրթական դպրոցի տնօրենը, ինչպես նաև համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ -- Արարտի մարզի Լանջազատ համայնքի ղեկավար Հ. Հակոբջանյանի հաշվետվությունը 2015 թ. առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, ուր

2015թ. առաջին կիսամյակի ընթացքում Լանջազատի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետի և ավագանու անդամների կողմից արձանագրվել է 180 ընդունելություն: Ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 260 տեղեկանք, ստացել 70 - ից ավել պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2015թ. առաջին կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման ջրատարները և համայնքում գտնվող, կարևոր նշանակություն ունեցող կամուրջները: Նախապատրաստական աշխատանքներ են ընթանում նոր բուժամբույլատորիայի շենքի տարածքի տրամադրման և կառուցման աշխատանքների համար: Կատարվում է նաև համայնքի մոտ 8 կմ երկարությամբ ճանապարհների ասֆալտապատման նախապատրաստական աշխատանքներ:

Ամիսը 4 անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտագրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ :

Համայնքի ղեկավարի աջակցությամբ ընթացքի մեջ է համայնքի բնակիչներին թունաքիմիկատներով, և սերմերով ապահովելու հարցը: Համայնքի բնակչությանը տրամադրվել է 10 տոննա ամոնիակային պարարտանյութ (սելիտրա):

2015թ. առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

- ա / հողի հարկ՝ 846.2 հազար դրամ.
- բ / գույքահարկ որից՝ շենք և շինություններ – 43.9 հազար դրամ, ավտոմեքենաներ – 660.0 հազար դրամ
- գ / տեղական տուրք՝ 50.0 հազար դրամ
- դ / ոչ հարկային եկամուտներ՝ 328.5 հազար դրամ

Համայնքում իրականացվել է մի շարք միջոցառումներ.

Հանդիսավորությամբ նշվել է հունվարի 28–ը՝ ազգային բանակի օրը , նշվել է կանանց միջազգային տոնը՝ մարտի 8 –ը : Հայտնում ենք Ձեզ, որ համայնքը պատշաճորեն նշել է «Հայոց Մեծ Եղեռնի» 100 ամյակը: Միջոցառումը սկսվեց երթով: Գյուղում գտնվող խաչքարի մոտ դրվել են ծաղիկներ և ծաղկետայսակներ, կատարվել է հոգեհանգստյան կարգ և մոմավառություն : Այնուհետև ասմուրով և հայրենասիրական երգերով հանդես եկան Լանջազատ համայնքի մշակույթի տանը գործող « Ասմունքի խմբակի » սաները , ինչպես նաև « Չովաշեն » պարային համույթը: Հրավիրված են եղել նաև լրագրողներ միջոցառումները լուսաբանելու համար:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1360.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Հուղարկավորության նպաստ՝ 140.0 հազար դրամ

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 400.0 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 798.0 հազար դրամ.

2015թ 2- րդ կիսամյակում նախատեսված է կուլտուրայի տան բակի բարեկարգում, փողոցների ասֆալտապատում , բուժամբույատորիայի շենքի կառուցումը մինչև 2015թ. դեկտեմբերի 30 – ր .խմելու և ոռոգման ջրի ցանցերի մասնակի վերանորոգում:

ՀԱՍՏԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀԱԿՈԲՉԱՆՅԱՆ